ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 19

«17» 05 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 3 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-161-Ն և 2018 թվականի մայիսի 4-ի ՀՕ-320-Ն օրենքներով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված լրացումները և ելնելով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը հստակեցնելու անհրաժեշտությունից՝ ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի՝ «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի նոյեմբերի 19-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3 հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները.

1) 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) 125.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ (Մարդու օրգանների (և) կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով)»,

2) 1-ին ենթակետից հետո լրացնել նոր՝ 1.1) և 1.2) ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) 127.2 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ (Մարդու վերարտադրողական կլոնավորումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով),

1.2) 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ (Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով)»,

3) 7-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 7.1) և 7.2) ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1) 149.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ (Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով),

7.2) 154.9 հոդվածի 2-րդ մաս (Ընտրակաշառքի միջնորդությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքը կամ պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով)»:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ